**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«17» հոկտեմբերի 2024 թ. N 88-Ա

## ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6.2 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի N 79-Ն որոշման 2-րդ հավելվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Տրամադրել Ռուսաստանի Դաշնության «ՎԱԼԴԵՔՍ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «50,1 ՄՎտ սահմանված էլեկտրական հզորությամբ և 29,2 ՄՎտ ջերմային հզորությամբ էներգակենտրոն» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «1-ին դասի քաղաքաշինական փաստաթղթերի կազմում» գործունեության տեսակի «Էլեկտրամատակարարում» և «Ջերմագազամատակարարում և օդափոխություն» ենթատեսակների համար:

2. 1-ին կետում նշված օբյեկտի թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2026 թվականի դեկտեմբերի 30-ը:

3. Տրամադրել Ռուսաստանի Դաշնության «ՎԱԼԴԵՔՍ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «50,1 ՄՎտ սահմանված էլեկտրական հզորությամբ և 29,2 ՄՎտ ջերմային հզորությամբ էներգակենտրոն» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «1-ին դասի շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Էլեկտրամատակարարում» և «Ջերմագազամատակարարում և օդափոխություն» ենթատեսակների համար:

4. 3-րդ կետում նշված օբյեկտի թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2026 թվականի դեկտեմբերի 30-ը:

5. Տրամադրել Իրանի Իսլամական Հանրապետության «ՓԱՐՍ ԹԱԲԼՈ» փակ բաժնետիրական ընկերությանը «ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք և Նոր Գյուղ բնակավայրերի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքներ» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «1-ին դասի շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ», «Էլեկտրամատակարարում», «Ջերմագազամատակարարում և օդափոխություն» և «Ջրամատակարարում և ջրահեռացում» ենթատեսակների համար:

6. 5-րդ կետում նշված օբյեկտի թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2027 թվականի մարտի 20-ը:

7. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին հրամանում նշված իրավաբանական անձանց իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

17.10.2024

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ